ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՍԵԴԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի գիտաշխատող

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ ՇՐՋԱՆԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ՆՈՐԱՅԱՅՏ ՊԱՏԱՌԻԿՆԵՐԸ

Ուսումնասիրելով Մաշտոցեան Մատենադարանի ձեռագրերի նկարազարդ պատառիկ-պահպանակները՝ պարզեցինք, որ 11342 հայերէն ձեռագրերից 2200 աւելին պատառիկ-պահպանակ ունի՝ հիմնականում կարուած ձեռագրի սկզբում կամ վերջում, որոնցից նկարազարդ են շուրջ 300[1]։

Այս աշխատանքում անդրադառնալու ենք դրանցից մէկին՝ ՄՄ Հմր 963 ձեռագրին, որը կրկնագիր է[2]։ Հին ձեռագիրը, որը հետագայում օգտագործել են նորը գրելու համար, բովանդակութեամբ երկաթագիր Աւետարան է, իսկ նորը Մաշտոց է՝ գրուած 14-րդ դարում։ Գրիչը եւ ծաղկողը Յովհաննէս սարկաւագն է, ստացողը Ստեփանոս եպիսկոպոսը[3]։ Ձեռագիրը սկզբում եւ վերջում ունի պատառիկ-պահպանակներ, որոնք, հաւանաբար, պատկանել են երկաթագիր ձեռագրին։ Նման ենթադրութեան հնարաւորութիւն են ընձեռում ձեռագրի միւս էջերում պահպանուած գրի հետքերը։

Սկզբում կարուած երկու թերթ պատառիկը, որ Յովհաննէս աւետարանչի[4] պատկերն է[5], ստացուել է մագաղաթեայ մէկ թերթի (31x25) ընդլայնակի երկտակումով (նկ.1)։ Ցաւօք, աւետարանչի պատկերը շատ վնասուած է եւ դժուար տեսանելի, սակայն պատկերատիպը, կարելի է ասել, բացառիկ է եւ շատ մեծ հետաքրքրութիւն ունի։

Այս պատառիկներն առաջին անգամ նկարուել են Մաշտոցեան Մատենադարանի կրկնագիր սարքով, ինչի օգնութեամբ նկարազարդ պատառիկների վնասուած հատուածներն աւելի տեսանելի են դառնում[6] (նկ. 1բ)։

Աւետարանիչը պատկերուած է եռանկիւնաձեւ նարնջագոյն եւ կապոյտ նախշե-

---

[1] Այս նկարազարդ օրինակների մէջ մեծ խումբ են կազմում լուսանցազարդերը, սրանց յաջորդում են վաղ շրջանի խորանները։ Առանձնայատուկ օրինակներ են աւետարանիչների, կիսախորանների, սրբերի, զօրավարների եւ տէրունական սակաւաթիւ պատկերները։

[2] Ձեռագրի մանրամասն նկարագրութիւնը տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, կազմեց Օ. Եգանեան, հտ. Գ., Երեւան, 2007, էջ 1485-1490։

[3] 1բ էջում պատկերուած խորանի ներքեւի հատուածում կարդում ենք՝ «Ես՝ Յոհանէս աբ[եղայ]», 81ա՝ «Ստացաւ սոյա՝ Ստեփանոս եպիսկոպոս, սուրբ տաճիս, յիշատակ ինձ եւ ծնաւղաց իմոց, յիշա ի Տէր։ Եւ Յովանէս գրիչս յիշեա, եւ մայրս իմ ՄաՀիկն»։

[4] Սա հաստատում է պատառիկի դարձերեսին առկայութեամբ Ղուկասի աւետարանի վերջի հատուածի՝ «Եհան զնոսա... Աստուած»։

[5] Այս պատառիկի բնութեանը ընդհանուր գծերով անդրադարձել է Տ. Իզմայլովան, տե՛ս **Т. Измайлова,** Армянская миниатюра XI века, Москва, 1979, стр. 213։

[6] Կրկնագիր սարքով նկարելուց յետոյ պատկերները մշակման կարիք ունեն յատուկ ծրագրի միջոցով, որը մեզ մօտ դեռ չի կիրառւում։

րով լցուած զարդաշրջանակի մէջ[7]։ Նա ներկայացուած է Աւետարանը ձեռքին գրելիս՝ մեծ, ոսկու հետքեր ունեցող լուսապսակով եւ կապոյտ ու կանաչ, մուգ-բաց երանգներով գունաւորուած հագուստով։ Ոտքերի տակ ուրուագծւում են պատուանդանի հետքեր։ Նա շինութեան ներսում է՝ կապոյտ խորքով եւ իրար դիմաց ներկայացուած երկու շէնքի վերնամասում՝ վարագոյրներով, որոնցից միայն մէկի կարմիր գունաւորումն է պահպանուել, իսկ միւսի վրայ նշմարւում են կանաչի թոյլ հետքեր։

Կրկնագիր սարքով նկարուած օրինակում աւետարանչի պատկերից մի փոքր ներքեւ նշմարւում են, հաւանաբար, գրակալի հետքեր։ Յաւօք, աւետարանչի դիմագծերի մասին ոչինչ չենք կարող ասել, քանի որ դէմքը խիստ վնասուած է։ Չնայած դրան՝ յստակ է, որ Յովհաննէսն իրեն բնորոշ պատկերատիպով չէ. հիմնականում ալեհեր մարդու տեսքով, որը շատ յաճախ ներկայանում է Աւետարանն իր աշակերտ Պրոքորոսին թելադրելիս։

Պատառիկի Ա երեսին հետագայի, հաւանաբար 16-րդ դարի յիշատակարան է. «Մանիխանի վասիաթն է ա[յս], որ իւրետ ժամուց Ա. ղազան, Ա. թաս, Ա. նալպաքի, իւր տեղ ու բարձն, Ա. թոփ, Ռ. դիան»[8]։

Թւում է, թէ աւետարանչի՝ 10-11-րդ դարերին բնորոշ պատկերատիպ է, որը, սակայն, խախտւում է տեսարանի՝ աջ կողմում առկայ պատկերով, որը չափսերով շատ աւելի փոքր է եւ ներկայացուած է որմնախորշի մէջ՝ ձախ ձեռքին նիզակ, աջը՝ կոնքին հենած։ Առաջին հայեացքից կարող է թուալ, թէ սա Պրոքորոսն է, սակայն այս պատկերատիպը կապ չունի Յովհաննէսի աշակերտի հետ։

Այս կապակցութեամբ ուշագրաւ է Տ. Իզմայլովայի տեսակէտը. պատկերում նա տեսնում է տղամարդու անտիկ քանդակ, որը յայտնի է բիւզանդական արուեստից, սակայն երբեք չի համադրուել աւետարանիչների պատկերների հետ[9]։

Աւետարանչի այս պատկերն ընդհանուր գծերով յարում է բիւզանդական օրինակներին, սակայն աջակողմեան լրացումը նորութիւն է ինչպէս բիւզանդական, այնպէս էլ հայկական մանրանկարչութեան համար։

Այս առանձնայատուկ օրինակը քննելիս հնարաւորութիւն ունենք ենթադրելու, որ այստեղ գործ ունենք աւետարանչի ներշնչուած կերպարի հետ եւ աջակողմեան այս պատկերը իմաստութեան անձնաւորումն է՝ գուցէ կնոջ տեսքով (սա աւելի ուշ կը մանրամասնենք)։

Այս հարցին անդրադարձել է Վ. Ղազարեանը. նա կարծում է, որ ներշնչուած աւետարանչի տեսակը գալիս է անտիկ բանաստեղծ եւ մուսա խմբից[10]։ Քննելով Սարգիս Պիծակի մանրանկարները՝ Վ. Ղազարեանը գալիս է այն եզրակացութեան, որ աւետարանիչների պատկերների մօտ երկնքի սեգմենտը, Աստծոյ աջը կամ հրեշտակը ներշնչանքի աղբիւր են[11]։

Գալով մեր օրինակին՝ կարող ենք ասել, որ այստեղ եւս նոյն գաղափարն է արտայայտուած. գործ ունենք իմաստութեան անձնաւորում հանդիսացող կնոջ պատկերի հետ, որը ներկայանում է անտիկ քանդակի տեսքով՝ որպէս ներքին յարդարանքի

---

[7] Նման շրջանակներ շատ են հանդիպում բիւզանդական ձեռագրական օրինակներում. այսպիսի շրջանակները զարդարում են ոչ միայն աւետարանիչների պատկերները, այլեւ տարբեր բովանդակութեամբ մանրանկարներ։ Այդ օրինակներից մէկը Բրիտանական թանգարանում պահուող Յայսմաւուրք է՝ Add. 11870 (fol. 242v) եւ Dumbarton Oaks MS. 3 (fol. 6r) ձեռագիրը։

[8] Յիշատակարանը կարդալու հարցում օգնութեան համար շնորհակալութիւն ենք յայտնում Մատենադարանի գլխաւոր աւանդապահ Գէորգ Տեր-Վարդանեանին։

[9] Տե՛ս **Т. Измайлова,** Армянская миниатюра XI века, стр. 213։

[10] **Վ. Ղազարեան,** Սիւժետային մանրանկարը Կիլիկիայում, Երեւան, 1984, էջ 85։ Հին Յունաստանում մուսաները շատ կարեւոր դերակատարում ունէին. արուեստի եւ գիտութեան հովանաւորներն էին։ Համարւում էր, որ բանաստեղծը ներշնչանք է ստանում մուսայից։ Այս մասին աւելի մանրամասն տե՛ս **Ա. Առաքելեան,** Յունական գրականութեան պատմութիւն, Երեւան, 1968, էջ 23-24։

[11] Այս մասին աւելի մանրամասն տե՛ս **Վ. Ղազարեան,** Սիւժետային մանրանկարը Կիլիկիայում, էջ 85-86,

մաս՝ ունենալով յստակ խորհրդաբանութիւն։

Հետաքրքրական է նիզակի կամ գուցէ գրելու համար նախատեսուած երկար փայտի ուրուագիծը, որով պատկերւում էր պոեզիայի եւ ճարտասանութեան հովանաւոր հին յունական մուսան՝ Կալիոպան, որը սովորաբար կրում է գրելու համար նախատեսուած տախտակը եւ գալարակը։ Սակայն վերոնշեալ փայտն աւելի հաստ է պատկերւում։ Այս դէպքում աւելի հաւանական է նիզակի տարբերակը, ինչը տեսանելի է դառնում կրկնագիր օրինակում, որի դէպքում կարող ենք ասել, որ անտիկ այս քանդակը գուցէ ներկայացնում է Աթենաս աստուածուհուն, որի՝ այս օրինակին մօտ պատկերատիպը կայ էրմիտաժում (նկ. 1գ)։

Անտիկ աւանդոյթների ազդեցութիւնը ամրապնդւում է նաեւ բիւզանդական արուեստի հետ ունեցած զուգահեռներով, ինչը փաստում է այն, որ ձեռագիրը ստեղծուել է բիւզանդական աւանդոյթների հետ սերտ աղերսներ ունեցող միջավայրում։ Աստուածի լաւագոյն ապացոյցն են Աթոս լեռան մի քանի ձեռագրեր. 13m ձեռագրի աւետարանիչների անուանաթերթերի ճակատազարդերում կայ հետաքրքրիր մեկնաբանութիւն. աւետարանիչների ետեւում պատկերուած է կնոջ տեսքով մի պատկեր՝ որպէս աւետարանչին ներշնչող մուսայ[12] (նկ. 2)։ 14-րդ դարի այս ձեռագրի Մատթէոսի անուանաթերթը յատկապէս հետաքրքրական է, քանզի կինը ձեռքը դրել է նրա ուսին. այստեղ նա հանդէս է գալիս որպէս իմաստութեան անձնաւորում (նկ. 3)։ Այդպիսի պատկերատիպի հանդիպում ենք նաեւ Աթոս լեռան հաւաքածուի 283, 291 ձեռագրերում (նկ. 4)։ Նոյն սկզբունքն է նաեւ ուշ շրջանի ռուսական սրբապատկերներում, որտեղ Յովհաննէս աւետարանիչը ներկայանում է հրեշտակը թիկունքին։

Աւետարանչի ներշնչման աղբիւրին, նրա, այսպէս ասած, մուսայի՝ մեզ յայտնի ամենավաղ օրինակը 6-րդ դարի Ռոսսանոյի աւետարանում է, որտեղ աւետարանչի դիմաց պատկերուած կինը նման չէ յունական աստուածուհիներին կամ մուսաներին, այլ երկար՝ մինչեւ ոտքերն իջնող հագուստով է եւ գլուխը ծածկած՝ գուցէ ասորական կնոջ պատկերատիպով (նկ. 5)։

10-11-րդ դարերի՝ մեզ հասած հայկական օրինակներում աւետարանչի՝ մեր պատկերի հետ անմիջական զուգահեռներ չկան։ Մողնու եւ 1053 թ. ձեռագրերի աւետարանիչների պատկերները յստակ տարբերութիւններ ունեն։ Մեր օրինակը շփման եզրեր ունի Բեգիւնց աւետարանի (ՄՄ Հմր 10099) Մատթէոս աւետարանչի պատկերի հետ։ Վերջինս պատկերուած է Աւետարանը գրելիս, աչքի է ընկնում մեծ լուսապսակը, իսկ ճարտարապետական խորքում իրար դիմաց պատկերուած շինութիւններ են՝ առանց վարագոյրների (նկ. 6)։

Մեր ձեռագրի վերջում կարուած պատառիկը Ղուկասի աւետարանի անուանաթերթն է (24x16, մագաղաթ), որն ընդլայնակի հատուած թերթի միայն վերնամասն է։ Պահպանուած ներքեւի հատուածում կարդում ենք. «Աւետարան ըստ Ղուկա-Քանզի///» (նկ. 7)։

Անուանաթերթից մեզ է հասել միայն առանձնայատուկ ճոխութեամբ մշակուած մեծ ուղղանկիւն ճակատազարդը, որը կազմուած է չորս կամարաղեղներից, որոնք, ինչպէս եւ ամբողջ դաշտը, լցուած են ծաղկատերեւային նախշերով՝ վարդաշագանակագոյն հիմքով, որոնք իրենց անմիջական զուգահեռներն ունեն բիւզանդական արուեստում։ Առանձնայատուկ հետաքրքրութիւն ունեն ներքեւի կամարաղեղի չորս շրջանակները, որոնցից երկուսը պատկերում են տերեւներ կտցող թռչունների, իսկ միւս երկուսից մէկը խոյին կամ եղնիկին ճանկած եւ կտցած արծուի տեսքով է, միւսը՝ առիւծի։

նաեւ՝ Օ. Քէշիշեան, Սարգիս Պիծակի մի մանրանկար Ս. Դիոնիսոսի վանքի յունական ձեռագրում.-«Էջմիածին», յունիս, 2015, էջ 88։

[12] S.M. Pelekanidis, P.C. Christou, Ch. Tsioumis, S. N. Kadas, The Treasures of Mount Athos, Illuminated manuscripts, Greece, 1975, p. 389.

Այս անուանաթերթի ճակատազարդն իր տեսակով յիշեցնում է Տրապիզոնի աւետարանի անուանաթերթերը՝ կազմուած մեծադիր ճակատազարդից՝ լցուած ծաղկատերեւ նախշերով (նկ. 8)։ Ուղղանկիւն դաշտը բաժանուած է կամարաղեղներով։ Անուանաթերթերի յարդարանքի հետ զուգահեռւում է նաեւ խորանների զարդանկարչութիւնը, որ աչքի է ընկնում տարբեր տեսակի թռչուններ պարունակող շրջանակներով (նկ. 8բ)։

Տրապիզոնի աւետարանը, հաւանաբար, գրուել է Կարինի գրչատներից մէկում Բագրատունիների օրօք՝ 10-րդ դարի վերջին կամ 11-րդ դարի սկզբին[13]։ «...Այս ձեռագիրը բիւզանդական ու հայկական ոճերի խառնուրդին յատկանշական օրինակներէն մէկն է»[14]։ Այս կարծիքին է նաեւ Կ. Վայցմանը. «բուսական ծաղկատերեւային զարդարման ոճական ընդհանրութիւնները եւ նրբաճաշակութիւնը յարում են բիւզանդական նախատիպին՝ ոչ միայն կրկնօրինակման արուեստով, այլեւ բիւզանդական նկարազարդման տեխնիկայի տիրապետմամբ։ Կամարի ցանցանախշը եւ տերեւանախշերը համեմատելի են Վատիկանի յունարէն 364 ձեռագրի խորանի յարդարանքի հետ»[15]։

Ճակատազարդի ներսի յարդարանքը զուգահեռւում է Հաղբատի 1211 թ. (Հմր 6288) աւետարանի խորանների յարդարանքի հետ՝ կատարման մաներայի առանձնայատկութիւններով (նկ. 9)։ Հաղբատի աւետարանը Անիի մանրանկարչական դպրոցից մեզ հասած բացառիկ օրինակներից մէկն է[16]։ Այն գրուել է Հաղբատում եւ ծաղկուել, հաւանաբար, Անիի Բեխենց վանքում։ Ծաղկող Մարգարէն այստեղ աչքի է ընկնում կատարման վարպետութեամբ եւ անհատական մօտեցմամբ։

Մողնու աւետարանի խորաններից մէկի ճակատազարդում եւս հանդիպում ենք արծուի եւ առիւծի՝ իրար յաջորդող պատկերների (նկ. 10)։ Ճանկող արծուի պատկերագրութիւնը կայ հայկական եկեղեցիների պատկերաքանդակներում. Բուրթէլաշէնում, Հերհերում, Անիի Մայր տաճարում, ինչպէս նաեւ տապանաքարերի եւ խաչքարի վրայ[17]։ «Որսի» պատկերատիպն այս դէպքում միանշանակ չէ. կարող է պատկերուել գառ, խոյ, նոյնիսկ՝ եղնիկ։ Մեր օրինակում, սակայն, արծիւը ոչ միայն ճանկել, այլեւ կտցում է եղնիկին։ Սրան ամենամօտ պատկերատիպը գտնում ենք Աթոսի Մեծ Լաւրայի վանքի քանդակներից մէկում, որտեղ, սակայն, զոհի դերում ճագար է (նկ. 10բ)։

Հետաքրքրական է նաեւ օրինակի զինանշանային մեկնաբանութիւնը, որը, սակայն, միանշանակ չէ, քանզի առիւծն ու արծիւը կապւում են տարբեր իշխանական տների հետ[18] եւ այստեղ առանձին հանդէս չեն գալիս։

Վ. Հացունին Բագրատունիների զինանշանը համարում է արծիւը[19], իսկ Ռ.

---

[13] Տե՛ս Հայկական մանրանկարչութիւն, Վենետիկ, 1966, էջ 33, նաեւ՝ **З. Акопян,** Трапезундское армянское евангелие в контексте византийского искусства, Образ Византии.- Сб. статей в честь О. С. Поповой, Москва, 2008, стр. 29-46.

[14] **Ս. Տէր-Ներսէսեան,** Ակնարկ մը Ս. Ղազարու ձեռագիրներուն վրայ.- «Բազմավէպ», Վենետիկ, 1947, էջ 270։

[15] **Կ. Վայցման,** Հայկական մանրանկարչութիւնը 10-րդ դարում եւ 11-րդ դարի սկզբին, (Die armenische Buchmalerei des 10. und beginnenden 11. Jahrhunderts), թարգմ. գերմաներէնից՝ Ս. Մանուկեանի.-«Բանբեր Մատենադարանի», Հմր 24, 2017, էջ 304։

[16] Հաղբատի աւետարանի մասին աւելի մանրամասն տե՛ս **Գ. Յովսէփեան,** Հաղբատի դպրոցի մի գլուխգործոց (Գետաշէնի աւետարանը), Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի պատմութեան, Հ. Ա., Երեւան, 1983, էջ 254-290, նաեւ՝ Կ. Մաթէոսեան, Հաղբատի աւետարանը, Երեւան, 2012։

[17] Արծիւն այստեղ հանդէս է գալիս որպէս կերպարանափոխուած հրեշտակ, որը մահացածի հոգին ուղեկցում է երկնային արքայութիւն։ Այս մասին աւելի մանրամասն տե՛ս Կ. Մաթէոսեան, Նորավանքի վիմագրերը եւ յիշատակարանները, Երեւան, 2017, էջ 70-82։

[18] Այս հարցի կապակցութեամբ առաւել մանրամասն տե՛ս **Ռ. Մաթէոսեան,** Հայկական զինանշաններ, Երեւան, 1994։

[19] Տե՛ս **Վ. Հացունի,** Հայ դրօշները պատմութեան մէջ, Վենետիկ, 1930, էջ 33-38։

Մաթէոսեանը, զուգահեռներ տանելով Մլքէի աւետարանի հետ, գտնում է, որ Բագրատունիների զինանշանն առիւծն է։ Առիւծի շրջանակուած պատկերի հանդիպում ենք նաեւ Կարսի աւետարանի՝ Գագիկ թագաւորին ներկայացնող պատկերի հանդերձում[20]։ Սակայն մեր պատառիկում նրանք պատկերուած են եղնիկին կամ խոյին ճանկած. եւ դրանց՝ այս կամ այն իշխանական տան զինանշան համարելը իրատեսական չէ։

Արծուի այսպիսի տարբերակի հանդիպում ենք ՄՄ Հմր 5786 (7բ) եւ 2829 (114ա) ձեռագրերում, որտեղ «զոհի» դերում նապաստակ յիշեցնող պատկեր է։ Այս պատկերատիպի առումով շատ հետաքրքրական է Ա. Մնացականեանի մեկնաբանութիւնը, որը այն նոյնացնում է խաչի պատկերի հետ. «Միջնադարեան նկարիչները ձեռքի տակ ունենալով հարուստ նիւթ, յաճախ խաչը պատկերում են կենդանիների եւ բոյսերի միջոցով»[21]։ Իրականում բացառուած չէ, որ այստեղ գործ ունենք հէնց ժողովրդական պատկերացումների արտայայտման հետ, քանզի Ն. Շնորհալու խօսքից պարզ է դառնում, որ կրօնական խորհրդանիշ ոչ բոլոր խաչերն են եղել. «Քանզի ի ձեւ խաչի բազում կերպարանք են յօրինեալք յերկինս եւ ի վերայ երկրի, նաեւ յանբան կենդանիս եւ յոստայնանկութիւնս եւ ի նկարս նկարագրաց, որոց ո՛չ առաք հրաման երկիր պագանել, քանզի չի՛ք աստուածային զօրութիւնք ի նոսա, եւ որ արարածոյ երկրպագութիւն մատուցանէ՝ ընդ անիծիւք դատապարտեցին Գիրք Սուրբք, որպէս զկռապաշտսն»[22]։

Ծաղկատերեւային յարդարանքի առումով մեր օրինակն անմիջականօրէն զուգահեռւում է 1069 թ. (ՄՄ Հմր 10434) Աւետարանի հետ, որի գրիչը Յովհաննէսն է, իսկ ստացողը՝ Անանիա Ս(Վ)արագացին (նկ. 11)։ Այստեղ շրջանակները միայն բուսական զարդերով են լցուած։ Խորանների մեծ մասի ճակատազարդերը լցուած են ծաղկատերեւային նախշերով։ Անուանաթերթերի ճակատազարդերի յարդարանքը եւս սերտօրէն աղերսւում է մեր օրինակի հետ։ Ճակատազարդերի յարդարանքի զուգահեռների առումով պէտք է նշել նաեւ ՄՄ Հմր 275 ձեռագիրը, որը գրուել է 1078 թ., գրիչն է Յովհաննէսը, ստացողը՝ Սմբատ Պատրիկը։

Ս. Մանուկեանը եւ Վ. Ղազարեանը կարծում են, որ վերոնշեալ երկու ձեռագրերը ստեղծուել են բիւզանդական տարածքներին մօտ գտնուող հայկական շրջաններում[23], հետաքրքրական է նաեւ, որ դրանք 11-րդ դարի Անիի մանրանկարչական դպրոցի հետ կապւում են ճակատազարդերի ոճով։ Միւս կողմից, չնայած նկարզարդման համակարգի տարբերութիւններին, ոճով եւ արքունիքին վայել ճոխութեամբ կապւում են Տրապիզոնի եւ Կարսի աւետարանների հետ։

Այսպիսով, կարող ենք ասել, որ վերոնշեալ ձեռագրերը, ինչպէս նաեւ մեր օրինակը աչքի են ընկնում բիւզանդական մանրանկարչութեան հետ ունեցած աղերսներով։ Այս պատառիկները 9-րդ դարի հայկական մանրանկարչութեան հերթական օրինակներն են, որոնց համեմատական վերլուծութիւնը թոյլ է տալիս չբացառել, որ դրանք ստեղծուել են Բագրատունեաց թագաւորութեան գրչատներից մէկում, որտեղ քաջածանօթ էին բիւզանդական արուեստի աւանդոյթներին։ Այդ գրչատունը կարող էր լինել Անիում՝ հաշուի առնելով ընդհանրութիւններն այդ շրջանից մեզ հասած սակաւաթիւ օրինակների հետ։

---

[20] Տե՛ս **Վ. Հացունի**, Պատմութիւն հին հայ տարազին, Վենետիկ, 1923, էջ 190։

[21] **Ա. Մնացականեան,** Հայկական զարդարուեստը, Երեւան, 1955, էջ 203։

[22] **Ն. Շնորհալի,** Թուղթ ընդհանրական, էջմիածին, 1865, էջ 375։

[23] Տե՛ս Матенадаран, составители и авторы текста **В. Казарян, С. Манукян,** Москва, 1991, с. 61.

Նկ. 1 ՄՄ 963, Աւետարան (ԺԱ. դար), կրկնագիր Մաշտոց (ԺԴ. դար), պատառիկ Աբ-Բա, Յովհաննէս աւետարանիչ:



Նկ. 1բ ՄՄ 963, Աւետարան (ԺԱ. դար), կրկնագիր Մաշտոց (ԺԴ. դար), պատառիկ Աբ-Բա, Յովհաննէս աւետարանիչ[24]:

Նկ. 1գ Աթէնաս աստուածուհի, էրմիտաժ, Հին Հռոմ, 2-րդ դար:

Նկ. 2 Ձեռ. 13տ, Աթոս, Մարկոս աւետարանչի անուանաթերթ, 98ա:

[24] Պատառիկները նկարուած են Մատենադարանի՝ վերջերս ստացուած կրկնագիր կարդացող սարքով, ինչը հնարաւորութիւն տուեց աւելի լաւ տեսնել պատկերների ուրուագծերը:

Նկ. 3 Ձեռ. 13m, Աթոս, Մատթէոս աւետարանչի անուանաթերթ, 9ա:

Նկ. 4 Ձեռ. 283m, Աթոս, Մատթէոս աւետարանիչ, 9բ:



Նկ. 5 Ռոսսանոյի աւետարան, Մարկոս աւետարանիչ, 6-րդ դար:

Նկ. 6 ՄՄ 10099, Բեգիւնց աւետարան, 11-րդ դար, Մատթէոս աւետարանիչ:

Նկ. 7 ՄՄ 963, Աւետարան (ԺԱ. դար), կրկնագիր Մաշտոց (ԺԴ. դար), պատառիկ Գ, Ղուկաս աւետարանչի անուանաթերթ։

Նկ. 8 Հմր 1400/108, Տրապիզոնի աւետարան, 10-րդ դարի վերջ, Վենետիկ, Մխիթարեան միաբանութիւն, Մարկոսի անուանաթերթ, ճակատազարդ։

Նկ. 8բ, Հմր 1400/108, Տրապիզոնի աւետարան, 10-րդ դարի վերջ, Վենետիկ, Մխիթարեան միաբանութիւն, խորանի ճակատազարդ։

Նկ. 9 ՄՄ 6288, Հաղբատի աւետարան, 1211թ., խորանի ճակատազարդ:

Նկ. 10 ՄՄ 7736, Մողնու աւետարան, 11-րդ դար, խորանի ճակատազարդ:

Նկ. 10բ ՄՄ 963, Աւետարան (ԺԱ. դար), կրկնագիր Մաշտոց (ԺԴ. դար), պատառիկ Գ, ճակատազարդի մանրամասն (աջից), Մեծ Լաւրայի վանք, Աթոս, 963թ., բանդակային մանրամասն (նախից)[25]:

Նկ. 11 ՄՄ 10434, Աւետարան, 1069թ., խորանի ճակատազարդ:

[25] Լուսանկարը Հայկ Ազարեանի ֆեյսբուքեան էջից. https://www.facebook.com/haik.azarian: